

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՐԸ  
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՈՒՄ**

Հայկական քաղաքաշինութեան պատմութիւնը ուսումնասիրուած է հայկական ճարտարապետութեան զարգացման ժամանակաշրջաններում քաղաքների կառուցապատման մշակոյթը: Այն նաեւ ճարտարապետութեան տեսութեան մեծ բնագաւառ է, որի հետազոտման ակունքներից մէկը Մխիթարեան հայրերի պատմաաշխարհագրական եւ տեղագրական հրատարակութիւններն են: Հարցը մեծ արդիականութիւն ունի՝ ե՛ւ քաղաքների իրաւական փաստաթղթերի, ե՛ւ մշակոյթի բոլոր բնագաւառների հետազոտման, ե՛ւ 1915ի հայկական լքուած գոյքերի ուսումնասիրութեան, ե՛ւ ժամանակակից ճարտարապետութեան միջավայրակայունութեան ժառանգորդական խնդիրների ճանաչողական մեկնաբանութեան կապակցութեամբ: Այսօր անյետաձգելի է հայկական ճարտարապետութեան տեսութեան համառօտ ուսումնասիրուած նիւթերի մանրամասնումը, որ ընդգրկում է հայ եւ օտար մատենագրական գործերը, ճանապարհորդական եւ տեղագրական հետազոտութիւնները՝ եւրոպական, ռուսական, հայկական իրականութեան հեղինակներով հանդերձ:

Փաստօրէն, բնագաւառի մասին մինչեւ այսօր ընդամենը գոյութիւն ունի մի համառօտ ակնարկ՝ «Հայկական ցարտարապետութեան պատմութիւն» (Երեւան, 1964) գրքի նախաբանում, իսկ քաղաքաշինական խնդիրներով այն արտացոլուած է ակադեմիկոս Վարազդատ Յարութիւնեանի՝ «Հիմ եւ միջնադարեան Հայաստանի քաղաքաշինական մշակոյթը» (Ղենիքեարդ 1964) անտիպ դոկտորական ատենախօսութեան գրախօսական մասում, որտեղ այն նոյնպէս մեկնաբանուել է սեղմ գծերով: Ատենախօսութիւնում զանազան աղբիւրների կողքին, Մխիթարեան ժառանգութիւնից միայն հպանցիկ անդրադարձ կայ Հ. Ղեւոնդ Ալիշանի

«Այրարատ», «Ծիրակ», «Սիսական» եւ «Սիսուան» աշխատութիւնների մասին եւ ոչ աւելի: Հայկական ճարտարապետութեան տեսութեան մասին աւելի ընդարձակ ակնարկ կայ Դ. Քերթմեն-Ջեանի հեղինակած Հայաստանի վիրտուալ համալսարանի ճարտարապետութեան դասընթացի ներածական մասում, ինչպէս նաեւ վերջերս 2016ի Լոմոնոսովի համալսարանի կազմակերպած Հայ-ռուսական առնչութիւնների վերաբերեալ գիտաժողովում զեկուցուած եւ ՀՀ ԳԱԱ Բանբերում հրատարակուած յօդուածում: Այն վերնագրուած է Հայ-ռուս յարաբերակցութիւնը Հայկական ճարտարապետական ժառանգութեան ուսումնասիրման գործընթացում. անցեալը, ներկան եւ ապագան<sup>1</sup>:

Ներկայ հաղորդման նպատակն է՝ որպէս հայկական ճարտարապետութեան տեսութեան բաղկացուցիչներ, մանրամասնել Մխիթարեան միաբանութեան հայրերի համապատասխան գործերը: Մխիթարեան հայրերի գիտական ժառանգութեան դիտարկումը եւ դրանցում ճարտարապետութեան եւ քաղաքաշինութեան համար էական նշանակութեան՝ ներքեւում ներկայացուող գործերի մասնաւորումն ու դասակարգումը լուրջ խնդիրներ են:

Ա.- Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ԻՆՃԻՃԵԱՆ (1758-1833)

Եղած բազմաթիւ աշխատութիւններից հայկական բնակավայրերի նկարագրական տեղեկութիւններ են պարունակում հետեւեալ աշխատութիւնները:

- Տեսութիւն համառօտ հիմ եւ նոր աշխարհագրութեան, Ս. Ղազար, Վեցետիկ 1791:
- Աշխարհագրութիւն չորից մասանց աշխրհի. Ասիա, հտ. Ա., Ս. Ղազար, Վեցետիկ 1806:
- Ստորագրութիւն Հիմ Հայաստանեայց, Ս. Ղազար, Վեցետիկ 1822:
- Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխրհի, հտ. 1, 2, 3. Ս. Ղազար, Վեցետիկ 1835:

Նշուած աշխատութիւններում Հ. Ղուկաս Վ. Ինճիճեանը աշխարհագրութեան խորքով, նկարագրում է նաեւ Հայաստանի

1 "Armenian-Russian Correlations in the study of Architectural Heritage, past, present and future", Международная Научная Конференция "Армянская диаспора и Армяно-Российские отношения: История и современность", 14-16 сентября 2016 года, Москва, 16. Ի Բանբեր Հայագիտութեան, 2016, Թ-3, 174-189:

նահանգային բաժանմամբ ներկայացող բնակավայրերը, որպէս ազարակներ, գիւղեր, փոքր, միջին եւ մեծ բնակավայրերը, գաւառային կենտրոն քաղաքները, ինչպէս նաեւ աւելի մանրամասնութեամբ նահանգային կենտրոնները: Բնակավայրերի տուեալ տիպաբանութիւնը իր կառուցուածքով պէտք է կրկնուի Մխիթարեան հայրերի նոյնատիպ բոլոր աշխատութիւններում, որոնք արժէքաւոր են հայկական մատենագրութեան հետ օտար հեղինակների տեղեկատուութեան համադրութեամբ: Հ. Ղուկաս Վ. Ինճիճեանի աշխատութիւնների միւս կարեւոր առանձնայատկութիւնը կայանում է Հին, միջնադարեան եւ նոր ժամանակաշրջանների տեղանունումների տարբերակուած ուսումնասիրութիւնը, որ հանդիսացաւ յետագայ տեղագրութիւնների տեղանունների հիմքը:

Բ.- Հ. ՄԻՆԱՍ Վ. ԲԺՇԿԵԱՆ (1777-1861)

Ճանապարհորդելով Սեւ ծովի ափերով 1817-1819 թուերին՝ գրել է «Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեւ ծով» (Վենետիկ 1819) աշխատութիւնը, որտեղ աշխարհագրական, պատմական, ճարտարապետական, հնախօսական, ազգագրական արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում հայերի, թուրքերի, յոյների եւ այլ ժողովուրդների մասին: Իսկ՝ «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» (Վենետիկ 1830) պատմաաշխարհագրական բնոյթի աշխատութեան մէջ ներկայացրել է Անի քաղաքի պատմութիւնը եւ գաղթական անեցիների ներգրծումը Եւրոպայի տարբեր բնակավայրերի կառուցապատման գործում:

Հ. Մինաս Բժշկեանի աշխատութիւնները հիմք են ծառայել յետագայ բազմաթիւ ուսումնասիրութիւնների համար, որոնցից այստեղ մասնաւորաբար կարեւորում է, հայկական թաղամասերի բնութագրումն ու տեղադրական ճշգրտումը, որ կատարուել է Պոնտոսի բնակավայրերի եւ Արեւելեան Եւրոպայի հաշատ քաղաքների կապակցութեամբ<sup>2</sup>:

2 KERTMENJIAN, D., *Armenian city quarters and the architectural Legacy of the Pontus, Armenian Pontus*, edited by Richard Hovhannisian, California 2009, 189-215; ԳԱԼՍՏԵԱՆ, Զ., Հայկական գաղթավայրերի առաջացումը Ռեյրախնայում եւ Լեհաստանում, էջեր հայ գաղթավայրերի պատմութեան, ԲԱՐԽՈՒՋԱՐԵԱՆ, Վ. - ԵԿԱԻԵԱՆ, Զ., (խմբ.), Երեւան 1996, 77-98:



## Գ.- Հ. ՆԵՐՍԷՍ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ (1800-1866)

Հ. Ներսէս Վ. Սարգիսեանի աշխատութիւնը շրջադարձային նշանակութիւն ունեցաւ նրանով, որ այն իր տեղագրական բովանդակութեան մէջ ներմուծեց հայկական մի շարք գաւառների տարածքային քարտէզները, ճարտարապետական համալիրների վրայ եղած սեպագիր, յունարէն, վրացերէն եւ հայերէն վիմագրական արձանագրութիւններ եւ յատկապէս ներմուծեց ներդիր պատկերազարդ եւ գծագրական մանրամասներ: Այդ աշխատութիւնում բնակավայրերը քաղաքային գօտեւորուած ծրագրերով ներկայացնելուց բացի, ներկայացուել է մի շարք հանգուցային յուշարձանների ճարտարապետական գծագրերը, ինչպէս՝ Արմաշի վանքի (էջ 37), Թորթումի շրջանի Խոխուլայ եւ Օշքի վանքերի մայր եկեղեցիների (էջ 86-87), Անիի եւ շրջակայքի յուշարձանների (էջ 125-200), Վարազավանքի եւ Աղթամարի (էջ 256 եւ 276) եւ այլն: Փաստօրէն, տեղագրութիւններում աննախադէպ եւ դիտողի աչքով մեկնաբանուել են Անին եւ շրջակայքը, Կարինը, Վանայ լճի աւազանը, որոնք ի դէպ հիմք են ընդունուել յետագայ մի շարք կարեւոր փաստագրական ուղեգրութիւնների համար, ինչպիսիք են՝ Երուանդ Լալայեանցի, Վոլտեր Բախմանի, Ժոզէֆ Սորչիգոսկիի, Ժան Միշել Թիերրի հրատարակութիւնները<sup>3</sup>:

## Դ.- Հ. ՂԵԻՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ (1820-1901)

Հ. Ղ. Ալիշանի տեղագրական եւ միւս աշխատութիւնները դաստիարակչական դեր կատարեցին հայ ժողովրդի սերունդների զարգացման գործում: Այստեղ, այդ աշխատութիւններից մասնաւորւում են յատկապէս վենետիկում հրատարակուած ներդոյիշեալ ստուար հատորները՝ «Տեղագիր հայոց մեծաց» (1855), «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893) եւ այլք: Նշուած աշխատութիւնները դարձան աղբիւրներ

<sup>3</sup> ԼԱՒԱՅԵԱՆ, Ե., Վասպուրականի վանքերը, Ազգագրական հանդէս 1911-1912; BACHMAN, W., Kirchen und Moschen in Armenien und Kurdistan, Leipzig, 1913; STZYGOWSKI, J., Die Baukunst Der Armenien und Europa, Leipzig 1918. Jean Michel Thierry, քաղմաքի յոյուածների շարք հիմնականում հրատարակուած Revue des Études Arménienne հանդէսի 1960ականներից մինչեւ 1980ականների համարներում, ինչպէս նաեւ այլ ամսագրերում եւ առանձին հրատարակութիւններով:

հայկական պատմական քաղաքաշինութեան պատմութեան համար: Նրանք լինելով հայագիտական բազմանշանակ ներդրումներ նաեւ ընդարձակեցին ու անհամեմատ մանրամասնութեամբ ներկայցրեցին մինչ այդ եղած հայ եւ օտար տեղագրողների եւ հետազոտողների կողմից կուտակուած փաստադրական եւ նկարագրական ժառանգութիւնը:

Է. Հ. ՅԱԿՈԲՈՍ Վ. ՏԱՇԵԱՆ (1866-1933)

Հ. Յ. Տաշեանի ուսումնասիրութիւնները սեւեռուած են Պոնտոսից Բարձր Հայքի եւ Փոքր Հայքի տարածքների բնակավայրերի վրայ եւ կիզակէտում է վերցնում հայ բնակչութեան տեղաշարժերն ու քաղաքային կեանքը դրանցում: Արդիւնքները արտացոլուած են՝ «Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարիք», պատմական-ազգագրական ակնարկային ուսումնասիրութիւնում (Վիեննա, 1921), որ հիմնուած է 1919 թուականի իր թարգմանութեամբ հրատարակուած Գ. Անդերսոնի անգլերէն լեզուով հետազոտական եւ կիւմոն եղբայրների Փրանսերէն լեզուով հնախօսական ուղեւորութիւնների վրայ: Աշխատութիւնում բնակչութեան փաստադրումը կատարուած է տարածաքային յատակագծման մեթոդական կառուցուածքով, այսինքն տեղանուան ստուգաբանումից դէպի միջավայր, քաղաքաշինական բաղկացուցիչները եւ նրանց փոխադարձ դիրքը, թաղամասերն ու բերդաքաղաք-արուարձաններ համակեցութիւնը եւ այլն:

Փաստօրէն բնակավայրերի մեթոդական փաստադրութեան միւս կարեւոր ներդրումը Յակոբոս Տաշեանի «Հիմ Հայաստանի արեւմտեան սահմանը» շահեկան աշխատութիւնն է, որ հրատարակուել է յետմահու Վիեննայում 1948ին: Սա եւ «Հեթանոս Հայաստանի ութ մեհեմանները» ըստ Ազաթանգեղոսի եւ Մովսէս Խորենացու, գրուած աշխատութիւնները հայկական քաղաքաշինութեան եւ ճարտարապետութեան ուսումնասիրական խորացման կարեւոր ներդրումներ են, որոնք միաժամանակ հայկական ճարտարապետական մշակոյթի համատեքստում անդրադարձնում են մասնագիտական հետաքրքրութիւնների ժամանակի նուաճումները: Այս առումով միւս կարեւոր ներդրումը հայկական բնակավայրագիտութեան ասպարէզում, բնագաւառի պատկերազարդ բառարանին ձեռնարկումն է, որ կատարուել է Հ. Սուքիաս Էփրիկեանի ներքոյիշեալ հրատարակութիւնում: Այն խորհրդային տարիներին ամբողջականութեան ձգտեց «Հայոց տեղանուններ»

Հինգհատորեայ բառարանով, որ հայկական պատմական քաղաքաշինութեան փաստագրական հենքերից մէկն է:

## Զ.- Հ. ՍՈՒՔԻԱՍ Վ. ԷՓՐԻԿԵԱՆ (1873-1952)

«Պատկերազարդ Բնաշխարհիկ բառարան» աշխատութեան առաջին հատորն (1903-1905) ընդգրկում է Ա-Ը, երկրորդը (1907)՝ Թ-Կ տառերով սկսող տեղանունները: Աշխատութիւնն ունի հանրագիտական բնոյթ՝ տեղեկութիւններ է տալիս Հայաստանի նահանգների, քաղաքների, գիւղերի, Ռուսաստանի եւ այլ երկրների հայաբնակ վայրերի աշխարհագրութեան վերաբերեալ, պարունակում է վիճակագրական նիւթեր, քարտէզներ, պատկերներ: Սա ոչ միայն համակարգեց հայոց քաղաքաշինութեան պատմութեան հետաքրքրութիւնները, այլ եւ հանրամատչելի դարձրեց նրանով զբաղողների համար: Այդ են ապացուցում էփրիկեանից եւ Ալիշանից քաղուած նիւթերի արտացոլումը դպրոցական եւ համալսարանական հրատարակութիւններում՝ լինելով ազգային կրթութեան եւ գիտութեան կարեւոր բաղկացուցիչներից:

## Է.- Հ. ՀԱՄԱԶԱՍՊ Վ. ՈՍԿԵԱՆ (1895-1968)

Հրատարակութիւնները յատկապէս խորանում են Հայաստանի վանքերի պատմութեանը եւ տեղագրութեան ու հետազոտութեան գործընթացում: Վիեննայում Մխիթարեան մատենաշարով հրատարակուած «Վասպուրական-Վանի վանքերը», մաս 1-3 (1940-1947), «Սեբաստիայի վանքերը» (1946), «Բարձր Հայքի վանքերը» (1951), «Տարօն-Տուրուքերանի վանքերը» (1953), «Արցախի վանքերը» (1953), «Կիլիկիայի վանքերը» (1957), «Գուգարքի վանքերը» (1960), «Սեբաստիայի, Խարբերդի, Դիարբեքիի եւ Տրապիզոնի մահանգներու վանքերը» (1962), *ինչպէս նաեւ անտիպ մնացած* «Արարատեան մահանգի վանքերը», «Սիւնեաց աշխարհի վանքերը», «Հայ վանքերի սփիւռ» եւ այլ աշխատութիւնները մեծ ներդրում են հայագիտական եւ ճարտարապետական ուսումնասիրութիւններում: Նրանք ուսումնասիրական շտեմարաններ հանդիսանալով մատնանշում են հայոց ցեղասպանութեան տարիներին լքուած գոյքերի կենտրոնները եւ մշակութային հարստութեան կորուստի չափերը: Նշուած գրքերում յիշուած վանական համալիրների մասին ոչ միայն նկարագրական եւ պատմամատենագրական տեղեկատուութիւններ են, այլեւ՝ ցուցակագրական վաւերագրեր եւ



քաղաքային ու համաերկրային կեանքում ունեցած դերի կապակցութեամբ հայկական քաղաքաշինութեան մասնագիտական խորացման իւրայատուկ ճիւղերից մէկը:

Եթէ Հ. Համազասպ Ոսկեանի մասնագիտական ներդրումը վանական համալիրներն են, ապա պատմական քաղաքաշինութեան միւս կարեւոր ներդրումը կատարուել է բերդաշինութեան բնագաւառում յանձինս՝ Հ. Միքայէլ Վ. Յովհաննիսեանի:

Ը.- Հ. ՄԻՔԱՅԷԼ Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ (1910-1994)

Հ. Միքայէլ Վ. Յովհաննէսեանի «Հայաստանի բերդերը» (Վենետիկ 1970), «Կիլիկիայի բերդերն ու բերդաբաղաձերը» (Վենետիկ 1989) աշխատութիւնները մեծ ներդրումներ են: Նրանցում ոչ միայն ամփոփուած է ամրոցաշինութեան տեղակատրութիւնը, այլեւ աննախադէպ ծառայութիւն է մատուցուած այդ քաղաքաշինական հանգոյցների պատմամատենագրական տեղեկութիւնների համակենտրոնացման գործում, որ մեծ երախտիք է բնագաւառի ներկայիս եւ յետագայ ուսումնասիրութիւնների գործընթացում, որ առաջին ջրութակի նշանակութիւն ունեցաւ բերդերի ցուցակագրման եւ նկարագրական տուեալների ամբողջման համար:

Միւլթարեան հայրերը մեծ ներդրում ունեն պատմական Հայաստանի քաղաքաշինութեան ուսումնասիրութեան մէջ: Դրանք այսօր աղբիւրագիտական նշանակութիւն ունեն, որ արտայայտուած է՝ հնախօսական գործերում, պատմաշխարհագրական երկերում, պատմական Հայաստանի տարածքի տեղագրական հրատարակութիւններում, ինչպէս նաեւ տեղանունների բառարաններում:

ԴԱԻԻԹ ՔԵՐԹՄԵՆՁԵԱՆ

### Summary

## THE MATERIALS OF ARMENIAN HISTORICAL TOWN PLANNING IN THE SCIENTIFIC TRADITION OF THE MECHITARIST CONGREGATION

DAVID KERTMENJIAN

The history of Armenian town planning explores the culture of city building in the context of Armenian Architecture. The study of its development, however, is a matter of theory of Armenian architecture, with contributions from scholars of the Mechitarist Congregation as well. This is key for research on documents of Armenian cities, studies about Armenian culture, determination of lost properties in 1915 Armenian Genocide, as well as modern sustainable research, etc. This study attempts to identify this issue in the works of Mechitarist scholars, including Fr. Lucas Injijian (*The Geography of Ancient and Modern Armenia*, Venice: 1806, 1822 and 1835), Minas Pjshkian (*Travel researches to Pontos and Poland*, Venice: 1819 and 1830), Nerses Sarkisian (*Description of Minor and Greater Armenias*, Venice 1864), Ghevond Alishan (*Description of Shirak, Sisuan, Ayrarat, Sisakan and other regions*, Venice: 1881, 1885, 1890, 1893 and other), Hacospos Taschjian (*The Armenian settlements from South of Black sea*, Vienna 1821, 1945), Soukias Eprikian (*Pictorial dictionary of Armenia*, Venice: 1905, 1907), Hamazasp Voskian's volumes dedicated to the Armenian monasteries from different regions, Vienna: 1940-1947, 1946, 1953, 1957, 1962 etc.), Michael Hovhannesian (*The castles of Armenia and Cilicia*, Venice: 1970, 1989) etc. The article concludes with a classification of the above authors' contributions to the study of Armenian historical town planning, as well as architecture in general.